



« Ա Շ Ա Կ Ե Բ Տ Ը »

(Նկար ու քերթուած թրոֆ. Յ. Ամենաստի)

Մի աշխարհ-կեանքի՝ կարօտ-կեանքն եմ որու-
— Անմահութիւն։ [նում...]
Մի աշխարհ-կեանքի՝ լոյս-կեանքն եմ երա-
— Յաւերժութիւն։ [զում...]
Մի աշխարհ-կեանքի՝ անուն-կեանքն եմ կան-
— Աստուածութիւն։ [չում...]

Ի՞նչ լոյս՝ գծեց
ի՞նչ ոյժ՝ ձեւեց
Դրեց իմ աշխարհը այս գիրք-կեանքին։
ի՞նչ լոյս՝ գրեց
Լորեց իմ կեանքը այս լնթերցում-աշխարհին։
Զանձրոյթը։ Տանջանքը։

Ոչինչ մեկնել,
Ապւել ամէն ինչ։

Կեանք կապած հայեացքիս,
Թերթելով կարդացի,
Կարդալով թերթեցի ու դիմեցի,
Անցնելով հորիզոնից հորիզոն...
Սիրուց հրապուրուած եւ
Ցաղթանակի ու պարտութեան փառքերի ետե-
Մինչեւ հասայ Տիեզերքի սեմին։ [լից —

Սահմանը՝ թափանցում է Անհունին...
Մարդը՝ գումարւում է Աստուծուն...
Ցայտնին՝ կաչում է Անյայտին...
Այսպէս մենք հանդիպել ենք իրար,
Վարպետ եւ Աշակերտ —
Ես՝ ինծի:
Եւ ես խենդ խանդավառ՝ գրկել եմ —
Սրտերի կարօտը՝ մի աշխարհ-կեանք,
Իմ կեանքը՝ Այր
— Անմահութիւն։ ...՝ երազել եմ —
Մոքերի լոյսը՝ մի աշխարհ-օրէնք,
Իմ օրէնքը՝ Ոզի
— Յաւերժութիւն։ ...՝ համբուրել եմ —
Շրթների ծաղկել՝ մի աշխարհ-անուն,
Իմ անունը՝ Բանն
— Աստուածութիւն։
Աւաղ
Ինչու լուծեցի աչերիս կեանք-կապը։
Ինչու լոյս կապեցի հայեացքիս...
Որ, այսօր, այսպէս
Տեսնում եմ ամէն ինչ,
Ոչինչ եմ ճանաչում։
...՝ երազեցի —
Մոքերի լոյսը՝ մի աշխարհ-օրէնք,
Քո օրէնքը՝ Ոզի
— Յաւերժութիւն։ ...՝ համբուրեցի —
Շրթների ծաղկել՝ մի աշխարհ-անուն,
Քո անունը՝ Բանն
— Աստուածութիւն։
Եւ աչերիս կեանք-կապը լուծեցի,
Որ լոյս կապեմ հայեացքիս...
Ի՞նչ
Աշխարհը՝ հայելի։ Կեանքը՝ անդրադարձում։
Ի՞նչ ոյժ՝ կոկեց
Դրեց իմ աշխարհը այս հայելի-կեանքին։

ԱՇԱԿԵՐՏԸ